# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

## Շվեյցարիայի Համադաշնություն (Ժնև) 2018 թվականի ապրիլի 11- 13-ը գործուղման արդյունքների վերաբերյալ

**1. Անուն, ազգանունը՝**

Զարմինե Զեյթունցյան

**2. Զբաղեցրած պաշտոնը՝**

Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության զբոսաշրջության պետական կոմիտեի նախագահ

**3. Գործուղման վայրը և ժամկետները՝**

Քաղաք Ժնև (Շվեյցարիայի Համադաշնություն), 2018 թվականի ապրիլի 11- 13-ը

**4. Գործուղման նպատակը՝**

Ժնև Կանտոնի Առևտրաարդյունաբերական պալատում (CCIG) կազմակերպված «Հայաստան. բացահայտեք հնարավորությունները» խորագրով գործարար համաժողովին մասնակցություն

**5. Հանդիպումներ, ելույթներ, բարձրացված կամ քննարկված հարցերը**

Համաժողովի ընթացքում ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության զբոսաշրջության պետական կոմիտեի նախագահ Զարմինե Զեյթունցյանը հանդես է եկել «Բացահայտիր Հայաստանը. Ձեր հաջորդ զբոսաշրջային ուղղությունը» շնորհանդեսով՝ ներկայացնելով Հայաստանը որպես ակտիվորեն զարգացող, գրավիչ և անվտանգ զբոսաշրջային ուղղություն: Կարևորելով միջազգային զբոսաշրջային շուկայում հայկական զբոսաշրջային արդյունքի պատշաճ և շարունակական ներկայացման գործընթացը՝ արդյունավետ մարքեթինգային քաղաքականության իրականացման ճանապարհով, Զարմինե Զեյթունցյանը

հատկապես առանձնացրել է համաշխարհային զբոսաշրջային շուկա Հայաստանի ինտեգրումը և միջազգային համագործակցության արդյունավետությունը:

Համաժողովի շրջանակներում ներկայացրել է նաև Կոմիտեի պատրաստած "Feel Armenia" հոլովակը:

Միաժամանակ ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության զբոսաշրջության պետական կոմիտեի նախագահ Զարմինե Զեյթունցյանը մասնակցել է Ժնևի «Հակոբ Թոփալյան» հայկական կենտրոնում, Շվեյցարիայի Հայկական Միության օժանդակությամբ կազմակերպված հանդիպում-քննարկմանը տեղի հայկական համայնքի հետ՝ ներկայացնելով Հայաստանի զբոսաշրջային գրավչություններն ու ներուժը, ոլորտի զարգացման ուղղությամբ տարվող աշխատանքները:

Այցի շրջանակներում ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության զբոսաշրջության պետական կոմիտեի նախաձեռնությամբ բանակցություններ են տարվել "Baumeler" շվեյցարական խոշոր զբոսաշրջային գործակալության հետ, և պայմանավորվածություն է ձեռք բերվել Հայաստանի ճամփորդական գրավչության վերաբերյալ գովազդային արշավ սկսելու շուրջ: "Baumeler" -ը մոտ տասն օրից կսկսի համացանցային գովազդային արշավ «Ֆեյսբուք» սոցիալական ցանցի, իրենց էլեկտրոնային թերթի, Գուգլի որոնողական համակարգի միջոցով: Հիմա պատրաստվում են գովազդային նյութերը, որոնք վերոհիշյալ տեղեկատվական միջոցներով հասնելու են մի քանի տասնյակ հազար շվեյցարացի պոտենցիալ զբոսաշրջիկների ուշադրությանը՝ զբոսաշրջային թեժ սեզոնին ընդառաջ:

**6. Գործուղվողը՝**

Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության զբոսաշրջության պետական կոմիտեի նախագահ Զարմինե Զեյթունցյան

**7. Ստորագրությունը, ամսաթիվը՝**